# ԿՈՐՊՈՐԱՑԻԱՆԵՐԻ ՇԱԽՄԱՏԻ ԳՐԱՆ-ՊՐԻ ՄՐՑԱՇԱՐՈՒՄ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ԹԻՄԵՐԸ ՀԱՂԹՈՂ ԵՆ ճԱՆԱՉՎԵԼ

**20.12.2021 15:04**

2021թ-ի դեկտեմբերի 18-ին Հայաստանի շախմատի ակադեմիայում տեղի է ունեցել կորպորացիաների շախմատի Գրան-Պրի մրցաշարի վերջին 5-րդ փուլը:

Խաղին մասնակցում էին նաև ՀՀ փաստաբանների պալատի հավաքական թիմերը:

Խաղին մասնակցում էին 21 թիմ, որոնց թվում՝ Սինոփսիս Արմենիա, Սիներջի, ՍոֆթԿոնստրակտ, ՎՏԲ Բանկ, ՀԷՑ, Գազպրոմ, Ալֆա-Ֆարմ, Զիգզագ, Արցախ Էներգո, Իզմիրլյան, Չեսիֆայ և այլն:

Գրան-Պրիի հինգ փուլից բաղկացած առաջնությանը ՀՀ փաստաբանների պալատի 1-ին թիմը փայլուն հաղթանակ է գրանցել, զբաղեցնելով 1-ին տեղը, իսկ 2-րդ թիմը գրավել է երրորդ տեղը: Առաջնության երկրորդ տեղը զբաղեցրել է Սոֆթ-Կոնստրակտ 1-ին թիմը:

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })